ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ – ԴՈԼԳՈՐՈՒԿՈՎ (ԱՐՂՈՒԹՅԱՆ) ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ Կ. Ռ.

XIX դ. վերջին – XX դ. սկզբին աշխարհում ծավալված բազմաթիվ քաղաքական իրադարձությունները ցույց տվեցին, որ ազդեցության նոր գոտիների համար սկսվելու է աննախադեպ պատերազմ. դա մի շարք պետությունների ուղղակիորեն ստիպեց իրենց զարգացման գերակա խնդիրը դարձնել սեփական զինված ուժերի ռազմունակության բարձրացումը, որակական առումով բարեփոխումը:

Ցարական Ռուսաստանը, որը նույնպես գտնվում էր համընդհանուր սպառազինության մրցավազքում, դարասկզբին ծանր պարտություն էր կրել Ճապոնիայից և լուրջ անելիքներ ուներ իր զինված ուժերի համալրման գործում: Բանակի, սպայական կազմի որակական հատկանիշները բարձրացնելու, ինչպես նաև սպաների թիվը ավելացնելու համար երկրի ռազմակրթական համակարգը որոշակի փոփոխությունների ենթարկվեց[1], որի շնորհիվ Ռուսաստանի զինվորական կրթական հաստատություններում աճեց նաև հայազգի յունկերների, ուսանողների քանակը: Անդրկովկասից ռուսական բանակ էին զորակոչվում բացառապես քրիստոնյաներ[2], և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի դարերից եկած ռազմական ավանդույթները ներմուծվեցին Ռուսաստանի զինված ուժեր, որի բարձրաստիճան սպայակազմում և գեներալների շարքում մեծապես աճեց հայ սպայության և գեներալների թիվը, որոնք պատերազմի ողջ ժամանակահատվածում դրսևորեցին մեկ ընդհանուր գործին ծառայելու մեծ պատրաստակամություն:

Ռուսական բանակի սպայության կազմում հայազգի գեներալներն ու բարձրաստիճան սպաները ներկայացան որպես յուրահատուկ և բարձր որակական հատկանիշներով օժտված հավաքականություն: Հայազգի գեներալներից ու բարձրաստիճան սպաներից շատերն իրենց ծագումով հայկական այնպիսի տոհմերից էին, որոնք դեռևս XVIII դարից ձևավորված հարուստ ռազմական ավանդույթներ ունեին: Բաղրամյանների, Քալանթարյանների, Պոզոյանների, Յուզբաշյանների, Հախվերդյանների, Դոլուխանյանների և մի շարք այլ հայկական ընտանիքների կողքին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում փայլատակեց նաև Արղության իշխանական տոհմը: Փոխգնդապետ Դմիտրի Ալեքսանդրովիչ Արգուտինսկի-Դոլգորուկովը, կապիտան Կոնստանտին Սերգեևիչ Արգուտինսկի-Դոլգորուկովը, պորուչիկ Միխայիլ Պետրովիչ Արգուտինսկի-Դոլգո-

---

[1] Հարությունյան Ա. Հ., *Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918 թթ.)*, Ե., 1988, էջ 86:

[2] Նազարյան Ա. Ս., *Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թթ.)*, Ե., 2000, էջ 40:

բուկովը, պոդյասաուլ Վասիլի Արգուտինսկի-Դոլգորուկովը, գնդապետներ Պավել և Գեորգի Դավիդովիչ Արգուտինսկի-Դոլգորուկով եղբայրները, մարտնչելով և՛ գերմանացիների, և՛ ավստրիացիների դեմ, իրենց ենթակայության տակ եղած զորամիավորումներով մի շարք հաջողությունների հասան՝ բազմացնելով Ռուսաստանի հաղթանակների թիվը, բարձր պահելով իրենց իշխանական տոհմի անունը:

1914 թ. օգոստոսին Ռուսական ճակատում մարտական գործողությունները սկսվելուն պես կապիտան Կոնստանտին Արգուտինսկի-Դոլգորուկովն իր զորամիավորման հետ ժամանում է Արևելյան ճակատ և իսկույն ձեռնամուխ լինում իրեն հանձնարարված մարտական առաջադրանքի կատարմանը: Անընդհատ գտնվելով դիրքերում՝ կապիտանն անձամբ էր մասնակցում մարտական գործողություններին և դրանով էլ ավելի էր ոգևորում իր զինվորներին: Սակայն 1914 թ. սեպտեմբերի սկզբին, երբ Ռուսական ճակատում ծավալված մարտերն էլ ավելի էին թեժացել, կապիտան Կոնստանտին Արգուտինսկի-Դոլգորուկովը հրաձգության ժամանակ վիրավորվում է և հոսպիտալացվում[3]:

Նույն ժամանակահատվածում Արևելյան ճակատում ծավալված մարտական գործողությունների ընթացքում քաջագործություններով աչքի ընկավ նաև պորուչիկ Միխայիլ Արգուտինսկի-Դոլգորուկովը: Սեպտեմբերյան մարտերից մեկի ժամանակ այս հայորդին նույնպես վիրավորվում է, սակայն շարունակում է մնալ դիրքերում[4] և մարտը իր հաջող ավարտին է հասցնում, որի համար էլ արժանանում է հրամանատարության ուշադրությանը:

Ցարական բանակի գեներալ-լեյտենանտի որդիներ, ապագա գընդապետներ Պավել և Գեորգի եղբայրները դեռ մանուկ հասակից եղել էին զինվորական միջավայրում և զարմանալի չէ, որ հետագայում ռազմական գործը նրանց համար հոդեհարազատ դարձավ: Եղբայրներից ավագը՝ Պավելը (ծնվ. 1872 թ. օգոստոսի 18-ին, Թիֆլիսում), կրթություն էր ստացել Նիկոլաևյան կադետական կորպուսում, ապա Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանում: 1892 թ. սեպտեմբերից սկսել է զինվորական ծառայությունը և 1908 թ. հուլիսի 11-ին ստացել գնդապետի կոչում[5]:

Աշխարհամարտի ընթացքում լեյբ-գվարդիական Գրոդնենսկյան հուսարական գնդի կազմում, էսկադրոնի հրամանատարի պաշտոնում Պավել Արգուտինսկի-Դոլգորուկովը Ռուսական ճակատի առանձին հատվածներում ցուցաբերում է հրամանատարական հմտություններ, մարտավարելու անսպառ կարողություններ: Հայրենասիրության, օրինակելի ծառայության և զորավարական բարձր հատկանիշների շնորհիվ հայազգի գնդապետը բազմիցս արժանանում է պարգևների: Իսկ նրա կրտսեր եղբոր Գեորգիի քաջագործությունները, պատերազմի տարիներին վաստակած փառքն ու ստացած պար-

---

[3] Закавказская речь, 10.IX.1914.

[4] Նույն տեղում:

[5] Список полковников по старшинству, Петроград, 1914, с. 329.

դևները բավական էին, որ Արգուտինսկի-Դոլգորուկով տոհմի անունը մեկընդմիշտ առանձնանա շատ գերդաստաններից:

Գեորգի Դավիդովիչ Արգուտինսկի-Դոլգորուկովը (ծնվ. 1873 թ. նոյեմբերի 18-ին, Թիֆլիսում) նույնպես կրթություն է ստացել Նիկոլաևյան կադետական կորպուսում, ապա՝ Նիկոլաևյան հեծելազորային ուսումնարանում և դարձյալ ծառայության է անցել 1892 թ. սեպտեմբերին: Ի տարբերություն Պավելի, Գեորգին գնդապետի զինվորական կոչումը ստացավ ավելի ուշ՝ 1912 թ. օգոստոսի 26-ին: Մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը նա զբաղեցրել է հրամանատարական տարբեր պաշտոններ, ծառայել է շտաբում, կատարել մի շարք հատուկ առաջադրանքներ[6]:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես գնդապետ Գեորգի Արդուտինսկի-Դոլգորուկովը գնդի հրամանատարի օգնականի պաշտոնում ժամանեց Արևելյան ռազմաճակատ և անմիջապես իր տրամադրության տակ գտնվող միավորումով ձեռնամուխ եղավ մարտական առաջադրանքի իրականացմանը: 1914 թ. ռազմական ծրագրերը հաջողությամբ կատարելու և առանձին մարտական գործողություններում աչքի ընկնելու համար գնդապետը պարգևատրվեց Ս. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով հանդերձ:

1915 թ. պատերազմաշրջանի պլանները մշակելիս ռուսական ռազմակայանն իր գործողություններում մեծ տեղ հատկացրեց նաև ռուսական 9-րդ բանակի կազմում գտնվող Գվարդիական առանձնացված հեծելազորային բրիգադին, որի լեյբ-գվարդիական Գրոդնենսկյան հուսարական գունդը՝ Ռուսական ճակատի առանձին հատվածներում պետք է կատարեր հատուկ առաջադրանքներ, նպաստեր բրիգադի հաջողություններին:

1915 թ. հունվար-մարտ ամիսներին Գ. Արգուտինսկի-Դոլգորուկովը մի քանի սպաների և գնդի հրամանատարի անմիջական մասնակցությամբ, հակառակորդի տեղատարափ կրակի տակ, կարողացավ արյունալի մարտեր մղելով դուրս գալ գնդի համար ստեղծված ծանր իրավիճակից: Ավելին, այդ մարտերում գնդապետ Արգուտինսկի-Դոլգորուկովի հուսարները ոչնչացրեցին հակառակորդի մի ողջ զորաջոկատ: Այս մարտական առաջադրանքի իրականացման ընթացքում Գ. Արդուտինսկի-Դոլգորուկովն իր քաջագործություններով օրինակ ծառայեց ռուս զինվորների համար, ինչն էլ ճակատի հրամանատարության կողմից գնահատվեց. 1915 թ. մարտի 25-ին գնդապետն ստացավ Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշան՝ սրերով և ժապավենով հանդերձ: Նրա մասնակցությամբ հիշարժան է հատկապես 1915 թ. ապրիլի 28-ին Գորոդենկո բնակավայրի շրջանի մարտը, որտեղ հայազգի գնդապետը իր տրամադրության տակ գտնվող մի քանի հուսարների հետ կարողացավ թշնամուն ստիպել նահանջել՝ վերջինիս պատճառելով լուրջ կորուստներ: Այս մար-

---

[6] Նույն տեղում, էջ 1166:

[7] Залесский К. А. *Первая мировая война, биографический энциклопедический словарь, правители и военачальники, М., 2000, с. 485.*

տում ցուցաբերած քաջագործության համար գնդապետ Արգուտինսկի-Դոլգորուկովը ավելի ուշ արժանացավ Գեորգիևյան զենքի[9]:

Ռուսական ճակատում լեյբ-գվարդիական Գրոդնենսկյան հուսարական գունդը լուրջ հաջողությունների հասավ նաև 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. մարտն ընկած ժամանակահատվածում: Գնդի լավագույն զորայինների շարքում դարձյալ առանձնացավ հրամանատարի օգնականը՝ Գ. Արգուտինսկի-Դոլգորուկովը, որը հակառակորդի դեմ ծավալված մարտերում նպատակաուղղված գործողություններ և հրամանատարական ակնառու հմտություններ ցուցաբերելու համար 1916 թ. փետրվարի 1-ին արժանացավ Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանի սրերով հանդերձ (1915 թ. դեկտեմբերի 13-ի հրամանի համաձայն):

1916 թ. ողջ ընթացքում Ռուսական ճակատում դարձյալ ուշադրության արժանի էին վերոհիշյալ հուսարական գնդի գործողությունները, որը ճակատի հրամանատարության հատուկ հանձնարարականով ռուսական մի քանի զորամիավորումների հետ անցել էր 7-րդ բանակի տրամադրության տակ: Շնորհիվ գնդի որակյալ հրամանատարական կազմի, սպաների, ինչպես նաև հուսարների բարձր մարտական ոգու, լեյբ-գվարդիական Գրոդնենսկի հուսարական գունդը Արևելյան ճակատում բազմիցս կարողացավ հաջողությունների հասնել, իսկ մի շարք հատվածներում էլ ռազմավարական նշանակության կարևոր հաղթանակներ տանել: 1916 թ. ռազմական կամպանիայի սկզբնական շրջանում հակառակորդի դեմ ծավալված մարտական գործողություններում աչքի ընկնելու համար Գ. Արգուտինսկի-Դոլգորուկովը ռուսական 7-րդ բանակի հրամանատարի թիվ 117 հրամանով պարգևատրվեց սրերով և ժապավենով՝ ի հավելումն վաղօրոք ստացած Ս. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանի: Ռուսական գլխավոր հրամանատարությունը, բարձր գնահատելով հայազգի բարձրաստիճան սպայի կարողություններն ու գիտելիքները, 1916 թ. ապրիլի 7-ին նրան նշանակեց 3-րդ գրագունյան նովոռոսիյսկյան գնդի հրամանատար՝ պատերազմական ծանր պայմաններից տուժած այս գնդի մարտունակությունը կարգի բերելու և զինվորների մարտական ոգին բարձրացնելու նպատակով[10]:

1916 թ. ռազմական գործողություններում աչքի ընկնելու համար ռուսական գլխավոր հրամանատարության ուշադրությանն արժանացան նաև դաղստանյան1-ին հեծյալ գնդի փոխգնդապետ Դմիտրի Ալեքսանդրովիչ Արգուտինսկի-Դոլգորուկովը, որը 1916 թ. հոկտեմբերի 16-ին պարգևատրվեց Գեորգիևյան զենքով[10], և կազակական N զորամիավորման կազմում ծառայության մեջ գտնվող պոդյասաուլ Վասիլի Արգուտինսկի-Դոլգորուկովը, որը նույն թվականի հունիս

---

[8] Российский государственный военно-исторический архив (այսուհետև՝ РГВИА), ф. 409, оп. 1, д. 178446, л. 2.

[9] Նույն տեղում, էջ 16:

[10] Биобиблиографический справочник. Военный орден святого великомученика и победоносца Георгия (отв. составитель Шабанов В. М.), М., 2004, с. 386-387.

ամսին պարգևատրվեց Ս. Գեորգիևյան խաչի 4-րդ աստիճանի շքանշանով[11]:

Այն ժամանակ, երբ ռուսական գլխավոր հրամանատարությունը նպատակային նոր նշանակումների միջոցով ձգտում էր ռազմաճակատում բարձրացնել զորքերի մարտունակությունը ռազմական ոգին, Ռուսաստանում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները վտանգում էին ինչպես ռուսական զորքերի ձեռքբերումները պատերազմի դաշտում, այնպես էլ կարգ ու կանոնը զինված ուժերում: Մասնավորապես, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսական ռազմաճակատում ի հայտ եկան վտանգավոր երևույթներ. թշնամու զինվորների հետ, այսպես կոչված, «եղբայրացումների» հետ մեկտեղ, բանակում զգալիորեն աճեցին նաև դասալքության դեպքերը: Այսպիսի հանգամանքներով պայմանավորված մեծապես վտանգվեց ճակատի գոյությունը: Ավելին, ժամանակավոր կառավարությունն այս վտանգավոր պահին հատուկ միջոցառումներ ձեռնարկելու փոխարեն, 1917 թ. մարտի 5-ի ակտով և մայիսի 11-ի «զինծառայողների իրավունքների դեկլարացիայով» զինվորներին նոր իրավունքներ և արտոնություններ տվեց[12]: Ստեղծված իրավիճակում, երբ ռազմաճակատում կանգնած զորքը կամաց-կամաց դուրս էր գալիս վերահսկողությունից, բանակի մի շարք հրամանատարներ, որպես բողոք, պաշտոնաթող եղան, թոշակի անցան, մի մասն էլ, չցանկանալով ուղղակի ընդհարման գնալ, խնդրագիր ներկայացրեց իրենց պաշտոնաթող անելու վերաբերյալ՝ կապված առողջական խնդիրների հետ: Միայն մարտ-ապրիլ ամիսներին ռուսական զինված ուժերից ազատվեցին 150 զորահրամանատարներ, որոնց թվում էին ճակատի, բանակների, կորպուսների մի շարք հրամանատարներ, գոյություն ունեցող 240 դիվիզիայի հրամանատարներից՝ 75-ը[13]: Հաշվի չառնվեցին ոչ այդ սպաների կոչումները, ոչ պաշտոնները, ոչ էլ Ռուսաստանի զինված ուժերում կատարած ներդրումները[14]: Այդ գործընթացում մեծապես տուժեցին նաև հայազգի շատ գեներալներ ու բարձրաստիճան սպաներ:

Գնդապետ Գեորգի Արդուտինսկի-Գոլգորուկովը 1917-1918 թթ. ընթացքում մի քանի անգամ զեկուցագրերով դիմեց Օդեսայի զինվորական օկրուգի հրամանատարությանն ու զինվորական մինիստրին՝ առողջության պատճառով ծառայությունը դադարեցնելու, համաձայն գործող օրենքի, իրեն պարգևներով, համազգեստով և թոշակով զորացրելու խնդրանքով: Սակայն, հայազգի սպայի բոլոր խնդրագրերը մերժվեցին: Այսպես, օրինակ՝ ուսումնասիրելով Գլխավոր ռազմասանիտարական վարչության կողմից 1918 թ. հուն-

---

[11] Асадов Ю. *1000 офицерских имен в армянской истории, историко-биографические очерки, Пятигорск, 2004, с. 208.*

[12] *Революционное движение в России в мае-июне 1917 г. Июньская демонстрация. Документы и материалы, М., 1959, с. 237-239.*

[13] Кавтарадзе А. Г. *Июньское наступление русской армии в 1917 г. (Военно-исторический журнал, 1967, N 5, с. 113).*

[14] *РГВИА, ф. 366, оп. 1, д. 106, л. 73.*

վարի 16-ին Գլխավոր շտաբի Թոշակավորման բաժին ուղարկված թիվ 1389 գրությունը` տեսնում ենք, որ Ռազմասանիտարական դիտական հանձնաժողովը 1917 թ. դեկտեմբերի 27-ի նիստում ուսումնասիրել է Գեորգի Արգուտինսկի-Դոլգորուկովի առողջության վերաբերյալ կազմված N 35313 ակտը, և որքան էլ զարմանալի է, նրան համարել է պիտանի ոչ շարային պաշտոններում ծառայելու համար[15]: Այսինքն, նրան չի թույլատրել զորացրվել: Հարկ է նշել, որ այս մերժումը ոչ միայն սուբյեկտիվ էր, այլ նաև ուներ ֆինանսական դրդապատճառ, քանզի ծառայողական ստաժ ունեցողը, որ առողջության պատճառով էր զորացրվել, ավելի շատ թոշակ էր ստանալու զորացրման մասին խնդրագիր ներկայացնողից:

Սրտանոթային համակարգի, շնչառական ուղիների հիվանդություններ ունեցող, նյարդային լարված վիճակում գտնվող Գ. Արգուտինսկի-Գոլգորուկովը 1918 թ. փետրվարի 21-ին, իր խնդրագրի համաձայն, վերջապես ազատվում է ծառայությունից[16]: Լինելով իշխանական գերդաստանի ներկայացուցիչ` բնական է, նա չէր կարող հանգիստ ընդունել հեղափոխությունն ու դրա հետևանքները, ուստի չէր կարող ծառայել նաև նոր կարգերի համար:

1916 թ. հայ ազգային քաղաքական ուժերն արդեն հասկացել էին, որ Կովկասյան ռազմաճակատում շուտով ծանր իրավիճակ է ստեղծվելու, ուստի և ձեռնամուխ էին եղել տարբեր ճակատներում գտնվող հայ զինվորներին և սպաներին Կովկասյան ճակատ տեղափոխելու գործին: Նրանք ժամանակին դիմել էին ռուսական բանակի գլխավոր հրամանատարությանը` խնդրելով հայ կամավորական ջոկատներ կազմավորելու թույլտվություն. դրանք պետք է աջակցեին Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակին: Թույլտվություն ստանալով` Արևելյան ճակատի տարբեր հատվածներից Կովկասյան ճակատ է տեղափոխվում հայ զորայինների մի ստվար խումբ, որի մեջ էին նաև Արգուտինսկի-Դոլգորուկով ընտանիքի մի քանի անդամներ: Նրանց թվում էր իշխան Հովսեփ Արղությանը[17], որը Ռուսականից Կովկասյան ճակատ տեղափոխվելուց հետո ստանձնեց յոթ հայկական խմբերից կազմված մեկի հրամանատարությունը և հաջողությամբ մասնակցում էր մարտական գործողություններին[18]:

Տարբեր աղբյուրների հավաստմամբ` Արգուտինսկի-Դոլգորուկով իշխանական ընտանիքի անդամներից Կոնստանտին Զուրաբովիչ, Ալեքսանդր Զուրաբովիչ, Պյոտր Սերգեևիչ, Պյոտր Լուսաքերովիչ Արգուտինսկի-Դոլգորուկովները Առաջին աշխարհամարտի ժամանակ նույնպես տարբեր զինվորական կոչումներով եղել են զինվորական ծառայության մեջ, սակայն, ցավոք, նրանց մասին լիարժեք տեղեկություններ չեն պահպանվել:

---

[15] Նույն տեղում, ф. 409, оп. 1, д. 178446, л. 4.

[16] Նույն տեղում, էջ 5-7:

[17] Կարապետյան Մ., Հայաստանի հանրապետության բանակը և նրա գործունեությունը (1918-1920 թթ.), Ե., 1994, էջ 16:

[18] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Ե., 1991, էջ 12:

Հոկտեմբերյան հեղափոխությամբ ավարտվեց ռուսական կայսերական զինված ուժերի պատմությունը: Ցարական բանակի բարձրաստիճան մի շարք սպաներ, գեներալներ ներքաշվեցին Ռուսաստանում օրեցօր թեժացող քաղաքացիական պատերազմի հորձանուտները, սակայն Արգուտինսկի-Դոլգորուկով ընտանիքի անդամները հիմնականում չմասնակցեցին քաղաքացիական կռիվներին: Ընդհակառակը, այդ ընտանիքի, ինչպես և զինվորական ավանդույթներ ունեցող Հախվերդովների, Դոլուխանովների, Քալանթարովների, Պոզոևների և հայ այլ գերդաստանների որոշ ներկայացուցիչներ, այս անգամ արդեն իրենց ռազմական գիտելիքներն ու փորձը ներդրեցին Հայաստանի Առաջին հանրապետության զինված ուժերի կազմավորման գործում:

ВКЛАД КНЯЖЕСКОЙ СЕМЬИ АРГУТИНСКИХ-ДОЛГОРУКОВЫХ (АРГУТЯН) В ПОБЕДУ РУССКИХ ВОЙСК В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

ПАХЛЕВАНЯН К. Р.

Резюме

В преддверии первой мировой войны в рядах российского офицерства значительно возросло число офицеров армянской национальности. Многие армянские семьи посвятили себя воинской службе и среди них особое место занимает армянская княжеская семья Аргутинских-Долгоруковых (Аргутян).

Боевой путь, пройденный представителями этой семьи, явствует о том, что они своей самоотверженной службой, глубокими познаниями в сфере военного искусства внесли достойный вклад в дело строительства вооруженных сил Российской империи и победы русских войск.

После Октябрьской революции были ликвидированы российские царские вооруженные силы. Многие офицеры и генералы царской армии были вовлечены в гражданскую войну. Однако семья Аргутинских-Долгоруковых не приняла в ней участие. Наряду с представителями семей потомственных военнослужащих (Ахвердовых. Долухановых, Калантаровых, Позоевых) она внесла свою лепту в формирование вооруженных сил Первой Армянской республики.